ՄԱՍ III

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով ՀՀ 2012 թվականի համախմբված բյուջեն կանխատեսվում է՝ եկամուտների գծով՝ 937.2 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 1069.7 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների) և դեֆիցիտը՝ 132.5 մլրդ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների 2012 թվականի բյուջեների ծավալը խիստ նախնական գնահատվել է՝ եկամուտների գծով՝ 96.4 մլրդ դրամ (ներառյալ՝ պետական բյուջեից ստացվող հատկացումները) և ծախսերի գծով՝ 96.4 մլրդ դրամ: Ընդ որում, 2012 թվականի եկամուտները կանխատեսվում են 2010 թվականի փաստացիի նկատմամբ շուրջ 11.5 մլրդ դրամով, իսկ 2011 թվականի համար համայնքների կողմից ծրագրվածի համեմատությամբ՝ շուրջ 2.8 մլրդ դրամով ավելի:

«Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2012 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով՝ 910.0 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 1,042.5 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 132.5 մլրդ դրամ:

ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող դեֆիցիտի գումարը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով հաստատված և ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 16.1 մլրդ դրամ և 41.8 մլրդ դրամ նվազեցումով: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2012 թվականի ծրագրվող ՀՆԱ-ի հարաբերությունը կանխատեսվում է 3.1 %-ի չափով, 2011 թվականի համար ծրագրված և 2010 թվականի փաստացի ցուցանիշների՝ համապատասխանաբար 3.95%-ի և 4.98%-ի դիմաց: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող

դեֆիցիտի ֆինանսավորման համար ծրագրվում է ներգրավել շուրջ 335.0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով վարկեր, որոնց զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 1 հավելվածում և N 18 աղյուսակում):